

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Դրանստիվանիոյ Հայոց Մետրապոլիսը. Հ. Գրիգոր վ.
Գովրիկեանի Վիեննա:

Հին հին դարուց յիշատակները, տխուր անցքերի սըր-
տաճմիկ պատմութիւնը Նահապետի կրօնից այս անէծքն
է հանել:

«Ա՛հ անիծեալ երկաթ և ձեռք՝ որ զայն սրեց.

«Հայոց աշխարհ բեզ լուկ այդքան անուշ թուեց.

Նահապետն է, անցեալը քննեց, բրբրեց, արտասուքներով
գրուած գրքերն ու արիւնով շաղխուած քարերը կարդաց և՛
«չնչիկն՝ ի հագագին ոտնառած»՝ անէծք կարդաց: Անէծքը ա-
նէծք մնաց, երկաթն իւր գործը շարունակեց: Ճշմարիտ է, շա-
տակիւններ ու ազգեր են նրա աւերիչ ներգործութեանը ենթար-
կուել, բայց ամենից աւելի Հայոց աշխարհն է անուշ թուացել:

Եւ այդ նոր չէ, երեկուանից չէ, այլ ամենահին դա-
րերից. կերպ լեղի և արքաք դառնութիւնս — այդ է եղել
այդ երկրի բնակիչների կեանքը, որովհետեւ այդպէս են ցան-
կացել սասանեանները, արաբները, մոնղոլները, նոյն իսկ
յոյները և առհասարակ նրանք, որոնք ոյժ ու զօրութիւն
են ունեցել, ոյժի ու զօրութեան մէջ են օրէնք ու արդա-
րութիւն տեսել:

«Լեղի կերանք, դառնութիւն խմցինք», ասել են հայ-
րերը. աւելի բախտաւոր չէ եղել որդոց կեանքը. ապացոյց
բազմաթիւ վէրքերը և այն դառն վիշաճ, որով համակուած
կրօնից անյուսուցեան այս թղթն է կաթում. «մի՛ բանար
եարանիս, խորունկ է, խորունկ»:

Եւ ամենահին ժամանակներից սկսած հայոց աշխարհի
շատ որդիք երկաթից ու կրակից փրկուելու հնար օտար եր-

կրները՝ գաղթականութեան մէջ են որոնել: Ամենահին ժամանակներից սկսած ճակատագրի ծանր հարուածներին մըշտապէս ենթարկուած հայերը

«Փախչին, գնան, չգիտեն ո՛ւր, յետ չնայեն:

«Զի սուրն անգութ փռէ զայնոնք ցուրտ ի գետին.

«Երբա այլ ո՛ւր զփախ առել շտապ կերթան.

«Ամենքն ի մէկ տեղ, ո՛հ, ամենքն ի գերեզման:

Ճիշտ որ՝ ի գերեզման. գաղթականութեան ճանապարհը հայերի համար գերեզմանի ճանապարհ եղաւ: Բացառութիւններն անշահն են, չնչին: Հեռանալով հայրենի երկրից, կարուելով ազգի ամբողջութիւնից, նրանք քիչ քիչ մոռացան հայրենիքը, նոր հայրենիքի հետ կապուեցան: Ժամանակի ընթացքում խզուեցան և այն բարոյական կապերը, որոնցով գաղթական հայերը կապուած էին հայութեան հետ, որոնցով նրանց մէջ պահպանուում էր ազգութեան գաղափարը: Նոր սերունդները նոր հայրենիքի հետ կապուելով, հեռզհեռէ մոռացան հայրենի սովորութիւնները, աւանդութիւնները, լեզուն ու կրօնը, կապուեցան նոր երկրի հետ, նրա բարքն ու վարքն ընդունեցին:

Այդպէս ոչնչացան հայութեան շատ հատուածներ:

Հայ գաղթականութեանց պատմութիւնը ցոյց է տալիս մեզ, որ գաղթական հայը իւր հայութիւնը կարողացել է պաշտպանել այն երկրներում, որտեղ բարձր քաղաքակրթութիւն չի եղել, այն ժողովուրդների մէջ, որոնք կուլտուրապէս իրանից շատ բարձր դիրք չեն ունեցել: Պարկաստանի խորքերում հայկական հատուածները պահպանել են իրանց ազգային տիպը ամբողջապէս, իսկ Լեհաստանում հայերի անունը բարերի ու թղթերի վրայ է մնացել, այդտեղի հայութիւնը ձուլուել է տեղացի տարրի հետ և ոչնչացել: Ինչ է դրա պատճառը:

Մեզ կասեն՝ Լեհաստանում՝ Նիկոլ դուրս եկաւ, իսկ Պարսկաստանում՝ Նիկոլ չեպիսկոպոսներ չեն եղել: Բայց այդ երևոյթի պատճառը չէ, դա լոկ հեռեանք է աւելի խորը թաքնուած պատճառի: Հայ ժողովուրդի համար ազգայնութեան գաղափարը մարմնացած է իւր մայրենի եկեղեցու մէջ: Այդ եկեղեցին լոկ աղօթատուն, կրօնական սրբավայր չէ, դա անցեալ դարերի, ազգային պատմութեան վառ, կենդանի ու

կենդանարար յիշատակարանն է, դա կեդրոնն է ազգային պատմութեան, դա է, որ ցրուած, ցամաքած ոսկորներին կենդանութեան շունչ է փչել, ի սփիւռս աշխարհի ցրուած հատուածների մէջ միութիւն է պահպանել, նրանց միաւորող ողակն է եղել:

Եւ ահա Նիկողը քանդեց այդ ողակը. բայց ինչու նոյնպիսի Նիկող դուրս չեկաւ և Պարսկաստանում: Նիկողը հօ երկնքից չէր գլորուել կամ դժոխքից ծագել. նրան յղացել, պատրաստել, կաղմաւորել ու ծնել էր Լեհաստանի հայուութիւնը: Իսկ այդ այն պատճառով, որովհետեւ նոր, աւելի բարձր կուլտուրական շրջանի ազդեցութեան տակ թուլացել էր նրա մէջ ազգայնութեան գաղափարը: Նիկողը չլինէր, որ դուրս կըգար մի ուրիշը, կամ գուցէ ուրիշ մի քանի հոգի, որոնք և կըկատարէին նոյն գործը: Բաւական է, որ սկըսուեց արհամարհուել այն փաստը, հին ու փթած համարուել այն միտքը, թէ Վերայ Աշոյի և Լուսաւորչի հաստատեալ կայ ամենայն ազգն հայոց: Արդէն հետեւեալ և անխուսափելի աստիճանը Նիկողների ծագումն է, ապա մայրենի եկեղեցու բարձումը և ի վերջոյ՝ Լեհաստանի վիճակը — գերեզման:

Այդպիսի վիճակից ազատ ձեւով և ազգային տիպը պահպանելու համար գաղթական հատուածները պէտք է գիտակցութիւն ունենային խիստ պահպանողական լինել այն բոլոր կէտերում, որոնք շոշափում են ազգային եկեղեցին, լեզուն ու սովորութիւնները, մանաւանդ առաջինը ուր լեզուն էլ է պաշտպանում, պատմութիւնն էլ, սովորութիւններն էլ և առհասարակ ազգայնութեան գաղափարը: Եւ այդ ամենէին չէր ու չէ խանգարում կեանքի ընդհանուր յառաջադիմութեանը, գիտութեան, արհեստների և վաճառականութեան ասպարիզում արագ ընթացքով առաջ շարժուելուն: Դրանք նոյնքան կարեւոր պայմաններ են, որքան իւրաքանչիւր անհատի համար կարեւոր են իւր կեանքը պահպանել և մտաւորապէս ու նիւթապէս զարգանալ — առաջադիմել: Դժբախտաբար՝ շրջապատող պայմանները ջան ու ճիգ էին թափում, բռնութիւն էին բանեցնում այդպիսի գիտակցութեան վերջին նշոյլն էլ մարել և Նիկողների ճանապարհը հարթել:

Անցեալն անցել է՝ դառն ու ծանր զոհերով գնուած մի դաս թողնելով, որի կարեւորութիւնն այսօր միայն գաղթական հասուածներէ համար չէ... այլ ցաւալին այն է, որ ծանր զոհաբերութեան արդիւնք դասն այսօր իսկ մոռացութեան է տրուում թէ ազալային բունի, կոճղի, և թէ նրանից անջատուած գաղթականութեանց, նրա ճիւղերի կողմից, Այսօր տակաւին գաղթական հասուածներ կան, որոնք դեռ չեն կորել, բայց կորստեան անդունդի եզերքին են կանգնած, որոնք դեռ չեն փչացել, բայց փձանալու վրայ են: Այդ հասուածներէ մէկի՝ Տրանսիլուանիոյ Գերլա-Հայաքաղաքի հայ գաղթականութեան նկարագիրն է տալիս մեզ հ. Գրիգոր վ. Գովրիկեանը:

Տրանսիլուանիայի հայ գաղթականութիւնը հաստատուել է 17-րդ դարում: Դա հասուած է Մոլդաւիայի և Լեհաստանի հայ գաղթականութեան Մի կողմից անընդհատ և աշխարհաւեր պատերազմների շնորհիւ, որ տեղի ունէին թիւրքիայի ու Լեհաստանի միջև, միւս կողմից այն բռնութեանց պատճառով, որ գործադրում էին Լեհաստանի իշխողները հայոց խղճի ազատութեան վրայ՝ ստիպելով նրանց մայրենի եկեղեցին թողնել և պապի գերիշխանութիւնն ընդունել: Մոլդաւիայի և Լեհաստանի հայերից մի հատուած բաշուեցաւ և ապաւինեցաւ Տրանսիլուանիայի լեռների վրայ: Տեղական իշխանութիւնը շուտով հասկացաւ, որ երկիրը միօգտակար տարրէ վաստակել՝ յանձինս ներս գաղթող հայերի ու նրանց ամենատեսակ դիւրութիւններ տուաւ: Նոյնը շարունակեց ապա և Հաբսբուրգեան տունը, երբ Տրանսիլուանիան դրա իշխանութեանը ենթարկուեցաւ: Բնածին կարողութեամբ օգտուած, առևտրի և արհեստների մէջ ընդունակ, գործի մէջ տոկուն և եռանդուն հայը շուտով իւր բնակած ամայի տեղերը ծաղկեցրեց, հարստացրեց և տէրութեան ամենապտղաբեր վայրը դարձրեց: Հայաքաղաք կամ Գերլա (Արմենուպոլիս) քաղաքը հայերի հիմնած քաղաքն է, որ թագաւորական հրովարտականերով ազատ քաղաք հրատարակուեցաւ, որ գրեթէ մի փոքրիկ իշխանութիւն է, հայ քաղաքապետով, դատարաններով, ոստիկանութեամբ և ծերակոյտով:

Լատին կղերը գաղթականութեան հաստատուելու հենց առաջին օրից զինուեց այդ մի բուն ժողովրդի կրօնական

աղատութեան, նրա ազգային եկեղեցու դէմ և իրան օգնութեան կանչեց երկրի կառավարութիւնը: Ինչպէս երևում է, այստեղ կատարուել են նոյն ախուր դէպքերը, նոյն խարդախութիւնները, ու բռնութիւնը, որ տարիներէից ի վեր հէնց այդ ժամանակներն էլ տեղի ունէին Լեհաստանում: Ասում ենք, երևում է, որովհետեւ հայր Գովրիկեանը կարևոր չէ համարել գէթ հարևանցի, բայց ճըշգրիտ տեղեկութիւններ հաղորդել: Ներածութեան մէջ արժանապատիւ հեղինակը յայտնում է, որ Լեհաստանի իշխանները անպատմելի տանջանքներով չարչարեցին զիրենք, որ... կրօնին թողուն, մեր պապերն աւելի սիրով երկիրը թողեցին, բան թէ երեսն կրօնը: Բայց չէ՞ որ այդ տանջանքներն ու չարչարանքները կատարուում էին ի փառս «ուղղափառութեան», չէ՞ որ այդ չարագործութեանց հերոսները Հռոմի արքանեակներն էին, պապի առաքեալները: Հայր Գովրիկեանն աւելորդ է համարում արձա՛յագրել այն պայմանները, որոնց մէջ դրուեցան իրանց կրօնի համար երկրից երկիր գաղթող մեր պապերը» և որոնց շնորհիւ նրանք վերջ ի վերջոյ ստիպուած եղան ազգային եկեղեցին թողնել և պապին հաւատարմութիւն խոստանալ: Եւ դրա փոխարէն՝ նա ներբողներ է կարդում Ցրանսիլուանիայի հայոց Նիկոլին՝ Աւքեսնախոս Վրդարեան եպիսկոպոսին: Հեղինակիս խօսքով՝ այդ եպիսկոպոսը ճշմարիտ Ցրանսիլվանիոյ ազգայնոց առաջին կարգի աստղն է, որ իւր ընդարձակ գիտութեամբ, ու ձեռնարկութեան ոգւովն ու հեղինակութեամբը՝ շարունակ ու մեծ յաջողութեամբ գործած է ի նպաստ Ցրանսիլուանիոյ հայոց, որ պաշտպանեց զիրենք ամեն բանի մէջ... նրան անուանում է մեծ մարդ, նրա արդիւնքները անմոռանալի, որ ոսկեղէն անջնջելի տառերով դրոշմուած են ամենուրեւ (?) սրտին մէջ:»

Եւ այդ մարդու ամբողջ մեծութիւնը կայանում է նրանում, որ 1684 թուին Հռոմից՝ «իբրեւ առաքելական քարոզիչ» Ցրանսիլվանիա անցաւ այն բացորոշ կամքով, որ գաղթական հայերին, առաքելական սկզբունքների և Բրիտանիանուն համար այնքան չարչարուած, տանջուած, հալածուած հայերին, ուղղափառութեան ճշմարտութիւնները ճանաչեցնէ: Եւ ի՞նչ փափուկ ոճ, պատկառոտ լեզու և ներբողներ է կարդում հայր Գովրիկեանը Վրդարեան չեպիսկո-

պոսի վերաբերմամբ: Կարծէք թէ՛ դա Պօղոս առաքեալն է, որ Հեթանոսների մէջ է խիզախել և նահատակութիւնն աչքի տակ առած՝ ուղղում է խաւարի աշխարհում Աւետարանի լոյսը վառել: Բայց չէ՞ որ դա մի կրօնափոխ է, որ խիզճը վաճառել է պատուի, փողի և փառքի համար, որ աւելի մեծ պատուի տիրանալու նպատակով ձգտում է և տարագիր հայերին կրօնափոխ անել, այն հայերին, որ մի քանի տարի առաջ «աւելի սիրով երկիրը թողուցին, քան թէ իրանց կրօնը»:

Տողերի մէջ միայն կարդում ենք, որ Աւքեսնտիոսը կատաղի կռիւ է մղել հայ գաղութի և առանձնապէս նրա հովիւ Մինաս վարդապետի դէմ: Ահաւասիկ ինչպէս նկարագրում է մեր հեղինակը այդ կռիւը. «Ինչպէս որ հասարակօրէն ամեն նոր տեսակ շինուածքի, ամեն նոր կարգադրութեան պոռուղն՝ աշխատութիւն, վշտակրութիւն ու կասկածանք է, անակնկալ պատահեցաւ Աւքեսնտիոսի հետ: Իրենները՝ զինք իբրեւ խաղաղութեան վրդովիչ ու հաւատքի խռովարար Տրանսիլվանիոյ կառավարութեան ամբաստանեցին: Բայց չվախցաւ, սկսած գործքէն ետ չկեցաւ: 20րոս տարի բանիւ ու գործով աշխատել է, յենուած կառավարութեան աջակցութեան և դժի վերայ: Վերջապէս հասել է իւր նպատակին: Բայց թէ ի՞նչպէս, մեզ համար պարզ չէ, թէ և հեղինակը ցանկացել է այդ ևս պարզել՝ գրելով «Մինաս, բահանայից բաղմութեամբ մը յայտնեցին իւր առջևը՝ թէ ուղղափառ եկեղեցին դառնալու կը փափագին»:

Թող ներէ մեզ հայր Գովրիկեանը, որ պղպխի խընդիրներում իրաւունք չենք համարում Մխիթարեան հայերին հաւատ ընծայել. դրա համար նրանք մեզ ոչինչ գրաւական չեն տուել: 2է՞ որ այդ միւսնոյն կերպով են պարզուած Մխիթարեանց հրատարակութիւնների մէջ և Լեհաստանի Հայոց ու Նիկիոյ պատմութիւնը. բայց այժմ ո՞վ չը գիտէ, թէ ի՞նչ ողբերգական տեսարաններ են տեղի ունեցել հայերին պապական դարձնելու համար:

Աւքեսնտիոս Վրդարեանը իւր ամբողջ գիտութեամբ, ձեռնարկութեան ոգով ու հեղինակութեամբ հայութեան մէջ մի պատուաւոր անուն կը լինէր թողած, եթէ Հռոմը տեսնելու տեղ Մասիսն ու ս. Էջմիածինը տեսնէր, մի սև

«փարաջայ» հագներ, մի ձեռքին Աւետարան, միւս ձեռքին աղգային պատմութիւն՝ քարոզ խօսէր ընտանիքներում ու եկեղեցում, մի տարրական դպրոց բաց անէր՝ նոյն սրբազան մատենաների լոյսով գաղթական հայոց մանուկների սիրտը վառելու: Եւ այդ ժամանակ նրան «մեծ» անգամ կասէինք, նրա գործունէութեան արդիւնքները ոսկեղէն տառերով գրուելու սիրաւի արժանի կը համարէինք:

«Ուղղափառութեան» և Հռոմիւն յարեւու հետեւանքն է հայր Գովգիկեան, որ սյուսօր հարկադրուած էք մի ցաւալի գուշակութիւն անելով՝ ապահովապէս աղգարարել, «թէ դար մը պիտի չանցնի, ու պիտ, որ անհետանայ նաև Տրանսիլվիոյ Հայոց մէջէն հայութեան ոգին, հայ լեզուն, սովորութիւնները»: Եւ ի՞նչ զարմանք, երբ 1727 թուին «եկեղեցւոյ ու բարոյական կենաց վերաբերեալ կարևոր որոշմունքներ», կանոնադրութիւն էք կազմել, որի միակ նպատակն է «հայութեան ոգին և սովորութիւնները» վերացնել: Ընդհակառակը զարմանալ պէտք է, որ Գերլայի հայն պոքան ժամանակ կաշկանդուած լինելով պապական կղերի խորամանկահիւս ցանցերի մէջ՝ կարողացել է հայութեան ոգուց, սովորութիւններից ու լեզուից գէթ փշրանքներ պահպանել:

Մեռցնել ամեն մի ազնիւ զգացմունք, հարթել բոլոր արգելքները, որպէս զի գաղթականութիւնը գաղթական հայ ժողովրդի համար իրական գերեզման դառնայ, այդ է եղել Մխիթարեան հօր ներբողներին արժանացած Վրդաբեան եպիսկոպոսի և նրա յաջորդների ջանքը: Տեսէք, ի սէր Աստուծոյ, այդ հոգեւոր հայրերը տղամարդկանց և կանանց ընկերութիւններ են կազմել՝ «Եղբայրութիւն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին», «Եղբայրութիւն սրբոց Յովակիմայ և Աննայի»... և ի՞նչ նպատակով. թերեւ կարծէք, որ դրանց նպատակն է տարրական դպրոցներ հաստատել, գրքեր հրատարակել և այդպիսով միշտ կենդանի պահպանել աղգային լեզուն: Որքան կսխալուիք: Այդ ընկերութեանց նպատակն է շարժել մի բանի անգամ պատարագ մատուցանել և դրա ծախքերը հոգալ. իսկ ընկերութեան իւրաքանչիւր անդամ պարտքն է

«Ամեն օր հինգ Հայր մեր և հինգ Ողջոյն բեզ ա-

սեւ ի պատիւ հինգ խոցերու Քրիստոսի, աղաչելով զԱստուած, ու բարեխօս ունելով զսուրբ Լուսաւորին մեր, որ այս եղբայրութեանս օգնէ ու զսուրբ ուղղափառ հաւատն անհաւատից ու հերետիկոսաց մէջ տարածէն:

Ի դէպ չէ՞ արդեօք յիշել բանաստեղծի խօսքը.

«Մարդուն շինելով ձեր ձեռքին գործիք,

«Ներդաշնակութիւնը խանգարեցիք»:

Հայր Գովորիկեանի աշխատութիւնը Տրանսիլվանիայի հայոց գաղթականութեան անցեալի ու ներկայի մասին հարուստ և հետաքրքիր տեղեկութիւններ է տալիս, երբեմն խիստ մանրամասն և երկրորդական, նոյն իսկ աննշան տեղեկութիւններ: Այսպէս օրինակ յիշուած է, որ այս ինչ իշխանը Գլարա Հայաբաղաքն այցելելով այս ինչ հայի տան առջևը կանգնեց և մի գաւաթ ջուր խմեց: Երբեմն էլ մոռացուած են աւելի կարևոր տեղեկութիւններ: Օրինակ՝ մենք չկարողացանք հասկանալ, թէ ինչ բաներ են Գլարայի «ազգային» կոչուած դպրոցները, ինչով են դրանք ազգային:

Յ. Շաղարէքեան:

